

ՕՐԵ 80Ր

(ԵՍԵՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Մալիս-Նովմբեր, 1892.

Բաղդ եմ ասում, էլի:

Փոխանակ ընթերցողների հետ ամեն ամիս խօսելու և «Մուրճ»-ի խմբագրի ստորագրած կտրոններով «Մուրճ»-ի հրատարակչից Օրէցոյներիս վճարը ստանալու, —որտեղից որտեղ հանդէս եկաւ ինչ որ է աննշան, հասարակ աչքով անտեսանելի մի միկրոր, գրաւեց ամենքի ուշաղրութիւնը, զարձաւ նշանաւոր ամեն տեղ, վակեւելով ամեն տեսակ ազատութիւն։ Ազատութիւն՝ մտնելու թէ հարատի պալատները և թէ մանաւանդ շքաւորների խրճիթները, ազատութիւն՝ դիւդեր և քաղաքներ նւաճելու, ազատութիւն՝ ծովերի, սարերի և անսահման տարածութիւնների վրալով անցնելու, ազատութիւն՝ ամեն տեղ, ամեն րոպէ, ամեն մէկի վրա — առանց կրօնի և ազգի խտրութեան, ահռելի սարսափ գցելու...

Սակայն հասարակութիւններն էլ զրկած չէին ազատութիւնից անսեռ միկրորի գէմ կռւելու Նւ, իրաւ ամեն մի գիւղ, ամեն մի քաղաք, ամեն մի համարնք —իւր գիտեցած ու լսած ձևով էր մաքառում։

Նաւթառատ թագուն առաջինը եղաւ որ անվախ կերպով թզուկ միկրորին ազատ լաւտարարեց մուտքը Պարսկաստանից ծովի վրալով։ (Իրաւ է, մի քիչ տուժեց, բայց թէ կետու խացւեց որ թզուկները կարող են շատ վտանգաւոր լինել — եթէ գործում են մեծաքանակ և միահամուռ ոլժերով), թարեխնամ թիֆլսը — առաջքը կարեց սանիտարական խմբերով, ձրի թէւատներով, (ոչ թէ թէստրոններով), ձրի ճաշարաններով և ապն։

Մասնաւոր անձինք նմանապէս ազատութիւն էին վակելում կռւելու համար միջոցների ընտրութեան մէջ, Ալսպէս, պ. Նիկոլաձէն լրագրական էջերում, ժողովներում կրկնում էր անդադար. «Եւ ոչ մի կաթիլ Քուր

գետի ջրից! պ. Խ. Խաչատուրովը շարունակ սղեղին ֆեկցիան էր գոռում։ Պ. Մաստիցկին—թէ լաւաներ էր բուսցնում։ Պ. Արզար Յոհաննի խուռանը ամեն տեղ վրա էր համսում, գոյնելով։ ևս համ Յորուսավի պատգամաւոր եմ, համ Եղիպատոսի, համ Թիֆլիսի չորրորդ սանի խարական խմբի նախագահ...»

Կռւում էին և օտար պետութիւնների կոնսուլները, ամեն մէկը ջոկ ջոկ սիստեմով։ Պարոն պարսկական կոնսուլը հետևում էր Թիֆլիսում ընդունած սիստեմին, այն է ժամանակաւոր խոլերային բառակներ կառուցանում իւր պետի հպատակների համար, ժողովներ գումարում, բացարութիւններ տալիս միկրոբի մասին և ալլն, իսկ պ. տաճկական կոնսուլը վարում էր բոլորովին ալլ սիստեմով։ Ճակատագիրը—ճակատագիր է ում որ վիճակած է խոլերալից մնանելու նա կը մնանի, իսկ ում որ ոչ—ոչ—ալս էր սրա նշանաբանը։

Կռւելու ազատութիւն վակելում էին նաև լրագրերը ու պարբերական մամուլը իրանց աշխատակիցների ձեռքով և սոքա մաքառում էին ընդհանուր թշնամու դէմ, միահամուռ ողմերով, բաց տեսակ տեսակ լողածներով։ Ա. Ռամիկեանը «Մուրճ»-ում—խուլերակի դէմ՝ դեղին ֆեկտով աւագ վ. Արծրունին «Մշակու»-ում խօլերակի դէմ՝ ախտահան միջոցներով, Մ. Զարգարեանցը «Արարատ»-ում—խօլերակի դէմ և պ. Սովետանը Պոլսի «Հայրենիք»-ում—քուլերակի դէմ՝ վարակածին չի միջոցներով և ալլն, և ալին կռւողներ հան դախտի դէմ—եթէ չեմ սիստեմում խաչվառներով և քիսավիճակում մասսաժով։

Ազատութիւնը մերժած չէր նաև բժիշկներին։ Սակայն հին բժիշկներից շատերը, որոնք առաջուց ծանօթ էին անսեռ միկրոբի հետ, ալս անդամ, մեծանոգաբար թուլ տվինչերի խառարդ բժիշկներին միկրոբի հետ աւելի մօտուց ծանօթանալը և գործ ունենալը... կեանքի բիսկով։



Լրագրերի ասելով բրիտանական պարլամենտի նորընտիր 670 անդամներից ներկալ են գտնել նորոգւած պարլամենտի առաջին նստին ամենքը—բացի երեք հոգուց, որոնցից մէկը—սաստիկ հիւանդէր, ուրեմն և անկարող տանից գուրա գալու, երկրորդը Աւստրալիակում էր ու նոր էր տեղիկացել իւր ընտրութեանը, իսկ երրորդը Հնդկաստանից, որտեղից արդէն ճանապարհ էր ընկել Անգլիա։

—Ո՞ւրեմն, կը հարցնի ընթերցողը։

—Եւ թնչ ուրեմն, Կարծես թէ մեզանում, հակերիս մօտ, պարտաճանաշութիւնը նոյն աստիճանով չէ զարգացած, կարծես թէ Պոլսի ազգավիճակիցիուսանական ժողովի անդամները միշտ ներկաէ չեն լինում թէ առաջին և թէ բոլոր մէսա ժողովների նստերին առանց դրանով մի աղջակած է։

պարտականութիւն կատարած համարելու, կարծես թէ անգլիական պարտաճանաչութիւնը չի տիրում նաև մեր բոլոր եկեղեցական ծխական երեցիների, բարեգործական և այլ ընկերութիւնների անդամների մէջ.

* * *

Նոյն լրագրերը վկարում են որ պարլամենտի առաջին նստին Սոլա-
թիւրիի մինհստրութիւնը գլորեց առաւելութեամբ 40 ձախների, այսինքն
ճիշդ անքան ձախների, որքանով որ Գլազուռնի կուսակցութիւնը գերա-
գանցում էր Սոլսբիւրիի կուսակցների թւից:

Բայց թէ ինչ օգուտ, ընթերցող, ազդպիսի լամառ և հաւատարիմ
կուսակցներից, ախսոս չեն մեր կարծեցեալ համախոնները, Յիշում՝ էք
ապա տարւալ ապրիլի վեցի պատշամաւորական ընտրութիւնը, երբ մօտ
հարիւր ձախատէրերից եօթը կիսահոգի համախոններ կիսմալ էին եր-
կուսի և իրանց քւէնները տառ համ մէկին համ միւսին:

* * *

Ո՞վ գիտէ մինչև երբ պիտի նաև մեզ անծանօթ մնար վրաց բանա-
ստեղծ Պաշա Վժամելան, եթէ չը լինէր սրա մի նամակը ոչ բանաստեղ-
ծական նիւթի վրա, Վլաց ուսանողներին իւր ալդ զրած պատասխան—
նամակի մէջ վրաց բանաստեղծը մերժում է վճարել ուսանողական գան-
ձարանից իւր վերցրած պարտքը և օգտելով իրը բարեպատեհ հանգա-
մանքից խրատում է (երսի, ի հաշիւ իւր պարտքի) իւր արիւնակից ու-
սանողներին—անուսում վերադառնալ հալրենիք և շատանալ հողի հեր-
կումով ձ լա լև Տոլստոյ:

Ել մարդ չը մնաց որ հարձակւէր խեղճ բանաստեղծի վրա:

Բայց, ինչու

Նթէ բանաստեղծները վակերում են licencia poetica, այսինքն բա-
նաստեղծական ազատութիւն, ապա ուրեմն ինչու նոյն հիման վրա նոքա-
չը վակելեն նաև պարտքազանցութեան ազատութիւնը:

* * *

Պետերբուրգում հրատարակւող «Новое Время» լրագիրը իւր Աստ-
րախանի թղթակցի բերանով ապաէս է խօսում ⁽¹⁾ ալդ քաղաքի կլուրի
անդամների մասին. Այս վստահ եմ որ Աստրախանի կլուրը է աշխարհիս

ամենաանքաղաքագարին, ամենաանինտելլիգենտը և ամենախաւարը, Սրա աւելի քան երրորդ մասը քաղկացած է հակերից՝ նշանաւորապէս անկիրթ, սնապաշտ և թուլասիրտ մի ժողովրդից, երրորդակից աւելի են մանր վաճառականները, գործակասարները և ծառալողները և հազիւ մի երրորդականը կազմում լինեն ինտելլիգենտ անդամները, աստիճանաւորները և զինուրականները»:

Ապա, նուն թղթակցութեան վերջում պատմում է «Մուրձակ ընթերցողներին լաւանի դէպքը «Ուզու հավի հետ»¹⁾. «Երբոր ամբոխը կրակ էր տալիս հիւանդանոցը ալբելու համար—մի հակ «Ուզու» ժողովրդական մականունով մէկը մօտենում է, ամբոխին և մկանում քուռն կերպով համոզել որ, կրակ տալով, ամբոխը իւր վրա է առնում մի ծանր մնջք»:

—Տղերք, սա էլ է բժշկների կողմը. խորովնք սրան—և մի ակնթարթում նրան գանակոծեցին, կոչիկները հանեցին ու կենդանի կենդանի կրակը խոթեցին, և Ուզու, իրաւ որ, խորովնեց և մեռաւ սարսափելի տանջանքների սէջ»:

—Սական, պ. թղթակից, ուր էիք զուք և ձեր ինտելլիգենտները—եթէ ոչ Ուզու օրինակին հետեւլու գոնէ ալդ՝ անշանաւորապէս անկիրթ, մնապաշտ և թուլասիրտ հավին գաղան դառած ամբոխի ձեռքից ազատելու համար»:



Թիֆլիսում օգոստոսի քսանին նիստ կար մի ժողովի՝ քաղկացած ու բաւակի անդամներից, սանիտարական խմբերի նախագահներից և բժշկներից:

Պ. Նիկոլաձէն առաջարկում է ժողովին ընտրել մի լանձնաժողով ուսումնասիրելու նպաստակով թէ 1) համաճարակումի ընթացքը Թիֆլիսում և թէ 2) խոլերային զարգանալու նպաստող պալմանները քաղաքիս մի քանի թաղերում, Յանձնաժողովը, պ. Նիկոլաձէի ասելով, պիտի կազմի եւրոպական ձևով և իւր մէջ պարունակի թէ բժիշկներ և թէ գորնակ ու գражданскій ինժիներներ—լուսաբանելու համար վարակւած տեղերը Ծբայогіческої²⁾ և գիդրографіческої³⁾ անսակէաններից:

Պ. Նիկոլաձէի առաջարկը ընդունվում է և գիտն ական մասնաժողովի անդամներ են ընտրում. պ. Նիկոլաձէ, պ. Արգար Յովհանն իսեան, բժիշկ Աղամենանց, բժիշկ Խատամանով, բժիշկ Աւտանդիլով, բժիշկ Ստեպանով, բժիշկ Շոտինեանց, բժիշկ Ռազմամատ, բժիշկ Ռեխմաներ

¹⁾ «Մուրձ» № 7—8 էջ 1193.

²⁾ Երկրաբանական:

³⁾ Ջրագրական:

և քաղաքալին ինձեներ Տ. Էսել է՝ եօթը բժիշկ, մի ինժեներ և երիու հասարակական գործիչներ, որոնցից մինը—պ. Նիկոլաձն, ներ և քարածխալին մի ընկերութեան խոշոր ակցիոներներից մին—թերես իր քարածխալին մի ընկերութեան խոշոր ակցիոներներից մին—թերես երկրաբան (геолог) լինի, իսկ երկրորդը այն է պ. Ա. Յովհաննիստանը խոմ ջրագիր է ջրագիր, քանի որ 1881 թից սկսած ջրագիր է հրատարակում և ամեն տարի նոր սիստեմով:

*
* *

— Նշանաւոր „Եվտոնի Եվրոպա“ ուսա ամսագիրը իւր 1892 № 5-ում տեղ է տեղ պ. Գ. Կիւլպենկեանի գրքի ¹⁾ առիթով մի 8 տողանի գրախոսութեան—որի գրախօս հեղինակը (Géorgie ²⁾ Փրանսերէն բառը թարգմանում „Գեօրգիա“.

Ապալիսով բազմաշատ ուսանպատակ աշխարհների թիւը մինով ևս աւելացաւ առանց արիւննեղութեան, առանց դիպլոմատիական բանակցութիւնների Անգլիալի և պետութիւնների երրեակ դաշնակցութեան հետ,

*
* *

Հռչակաւոր պ. Գրիգոր Նիկողոսեանը սովոն տարւակ լուլիս 24 մեկնում է իւր ձեռքը Պետերբուրգից դէպի Թիֆլիս մի հակ խմբագրին:

Գր. Նիկողոսեանը իւր մեկնած ձեռքերում պահած ունի երկու նամակ, որոնցից մինի Նիկոլ իւր ասելով պաղուց է որ կրծում է խիղճը, չը նակելով անձնական պէսապէս մտահոգութիւններին» (լոսքը Գամառ Դաթիպալի ընտանիքը Նիկութապէս ապահովիլու մասին է). Միւս նամակը է, ալսպէս ասած, մի խոստովանութիւն տանջւած որտի, չը գնահատւած հրապարակագրողի մի լաւանութիւն, որից քաղում եմ նշանաւոր տողերը:

— Պարոն խմբագրապես... լրագրի, —ես աշխատակցել եմ Մանդումէի էֆքեար, Մասիս, Հալքենիք, Լուս, Թերջլամէնի էֆքեար, Զերիդէի Շարքիէ, Արևելեան Մամուլ, Արևելք և այն (իմա՝ աՄշակունորդարու) թերթերին:

Հիմա գալով ձեղ ընդառաջ կը խնդրէի... մերթ ընդ մերթ գրելիք բողոքներս հիւրասիրէք ձեր թերթի մէջ... մեկնում եմ ձեղ ձեռքս ու militaire ³⁾, եթէ կուպէք ընդունել, je suis tout à vous... ⁴⁾:

¹⁾ Անդրկովկասը և Ապշեռունեան թերակղզին - Փրանսերէն լեզուվ.

²⁾ Վաստան, ուսերէն=Գրյան.

³⁾ Զինուրականի պէտ.

⁴⁾ Զերն եմ ամբողջովին:

Պարոն Ա. Յովկիաննիսեանը (սրան էր դիմել պ. Նիկողոսեանը) ընդունում է մնկնած ձեռքերի հետ և 2 փշեալ նամակները և տպագրում նրանց միմիալն օգոստոս 16-ին, այն էլ խաբւելով դրժածւած ֆրանսիական դարձւածներից, Բայց եթէ մի շարաթով էլ ուշացնէր նամակների տպագրութիւնը՝ (Ու. Պատկանեանը վախճանւեց օգոստոսի 22-ին) խոմ պ. Նիկողոսեանի ձեռքերը մինչև հիմալ էլ կախ ընկած կը մնալին Պետերբուրգի ու Թիֆլիսի մէջտեղերքում օդի մէջ,

*
* *

Մալրաքաղաքի բոլոր լրագրերը հեռագրեր տպագրեցին թէ խոլերացին խեղդեցին Բաքում:

Միաժամանակ սրա հետ լուր տարածւց թէ Բաքւի ուղրաւան, աչքի առաջ ունենալով մի կողմից իւր ջանքերը, միւս կողմից ձախնաւրների բացակալութիւնը, աւելացրեց իւր անդամների ուոճիկը կիսով չափու

Եւ կալին միամիտներ, որոնք շարունակ ապացուցանում էին թէ Բաքւի դուման, լանձին իւր ուղրաւալի, անհնուատես զանւեց համաճարակումի ժամանակ...

*
* *

Գիգօ Զիշինաձէ հայ է թէ վրացի, Ըստ իս, որ նրան չեմ ճանաչում, եթէ դասելու լինենք կրօնաւած Գրիգոր անունից, —հաւանական է, որ Զիշինաձէն հայ լինի:

Խակ եթէ ուշագրութիւն դարձնենք ձէ վերջաւորութեան վրա, պէտք է ենթագրենք, որ Գիգօն վրացի է.

Համաճարակումի ժամանակ—Զիշինաձէի խնդիրը հանդէս եկաւ չնորդիւ Փրանսիացի Մուրու՛ի, որը տարէնը երկու երեք անգամ իւր Փրանսերէն լեզուվ հրատարակուղ պատկերազարդ Ակովկասիո մէջ տպեց իրը Ակովկասեան տիպարո Զիշինաձէի պատկերը, լակոնական ստորագրութեամբ՝ վրացի, Վրդովլած իշխան Թումանովների «Նովոէ Օբողրէնիէ» ոռու թերթը նկատեց, որ պատկերը աւելի նման է հաւկական տիպարին, Բայց ոռու Ակովկազն Մագիրը իսկուն տեղեկութիւններ հաւաքեց ու հաղորդեց որ պատկերը վրացու է, որ ազգ վրացու անունն է Գիգօ Զիշինաձէ, որ սա այս ինչ արհեստի է և կենում է ար ինչ տեղը.

Բարեբազզարար հարցը սուր կերպարանք չառաւ և չը նպաստեց համաճարակումի զարգանալուն:

Հանաքը դէնը—անձամբ չը ճանաչելով Գիգօ Զիշինաձէին—պատրաստ եմ գրադ գալ որ սա—եթէ ինտէլլիպենտ մէկն է—պակաս կը լինի ճանաշում՝ վրաց գրականութիւնը քան առաջին պատահած թիֆլուցին

հալը, որը համ վրացերէն պատկերազարդ մանկական հրատարակութիւն-ներ է տալիս վրաց հասարակութեանը, համ ծառալում վրաց բնմին, համ վրացերէն աշուղալին երգեր երգում ու յօրինում, համ ամենուրէք պատէն և անպատէն մրաւալժամիա բջաւում, համ էլ վրացուց ոչ պակաս կախէ-թու կարմիր գինի սպառում և գոտեմարտներ ու զօշի և աքաղաղի կոխւ-ներ սիրում... Ի՞նչով չէ վրացի թիֆլանցի հալը

* * *

Նրբ որ մի հաւ լրագիր ձեռու է ընկնում, ամենից առաջ կարդում եմ լավտարարութիւնները և գրեթէ միշտ դրանով շատանում Ալդ բաժնի մէջ մեր լրագրերը իրար չեն կրծոտում, թունդ բառեր չեն գոր-ծածում, հակառակորդի խօսքերը չեն աղաւաղում, մի խօսքով լալտարա-րութիւնների բաժինը կարգին մի բաժին է և բացի արդ, մէջը, երբեմն էլ նորութիւններ են պատահում:

Ամեն անգամ երբ «Մշակուի մէջ կարգում էլ նիկ. Նիկողոսսեանի հարազատ եղբայր հոչակաւոր Գրիգոր Նիկողոսսեանի» լավտարարու-թիւնները իւր հնարած համրիչի—հրճւում էլ անսահման կերպով և մինուն լալտարարութիւնը մինուն համարի մէջ փոխանակ մի ան-գամի տասը անգամ էլ կարգում... Նրբ—լանկարծ, իմացակ թէ «Մշակուի մէջ մի նամակ էլ ունի տպած պ. Նիկ. Նիկողոսսեանը իւր համրիչի մասին, ուր ի թիւս ալլոց նա հետևեալ հաշիւններն է անում (առանց սական իւր համրիչին դիմելու, թէն, ինչպէս որ ազդ կը նկատի ընթերցողը, ցուց տւած շահի թերը—սարսափելիններիցն են) .Ուուսաստան ու Պասկաստան 120—130 միլիոն ժողովուրդ ունին և առնւազն 25—30 միլ. համրիչ կծախւի, ուրեմն արտօ-նատէրը տես քանի տասնեակ միլիոն ոռուրլիններ պիտի վաստակէու, Բաց թէ տասնեակ միլիոն ոռուրլինների օգուտը սրանով չի վերջանում—սացի վշեալ Ռուսաստան—Պարսկաստանից անտարակում (Բնչ խօսք կաէ) բոլոր տէրութիւնների մէջ էլ կընդունւի, մանաւանդ Անդլիալում, մանաւանդ որ նրանց փողերը և կշիռները բարդ են և ավանու Ռւբեմն Անդլիան որ ըն-դունի—տասնեակ միլիոն ոռուրլինների օգուտը կը փոխարինւի հարիւր մի-լիոն ոռուրլինների, —իսկ արի տես որ մեր հակերը քնած են ու քնած, մինչ-դեռ ապալիսի մի արդիւնաւոր գործի համար հարկաւոր է միմիան տասը հազար ոռուրլի առաջին անգամից և աւելի ոչինչն ՝¹⁾.

Զարմանում եմ որ ոչ մի հավի գլխում չը նստեցին ալս միլլիոնները... զեն ուղում հակերը հասկանալ որ հաւ կղիսոնը զլուխ ունեցաւ համրիչ

¹⁾) «Մշակ» № 118.

Հնարելու, բայց չի կարող «գլուխ» դնել որ և է կառավարութիւնից արտօնութիւն (արիվիլեգիա) ձեռք բերելուն:

* * *

«Արձագանք»-ը, որի և բեռ ո ը ամենքին չալտնի էր, ցոյց տւեց և իւրա աստառը, տպագրելով 12 տարի սրանից առաջ Սիւլիվկից ստացած ու մինչ օրս տպագրութեան համար անլարմար գտնւած «Աստառ»-ը:

* * *

Տեղական բոլոր ռուս թէ հակ լրագրերը—կոկորդիլոսի արտաստաններ են թափում հալոց թատրոնի անժողովրդական ու դատարկ մնալուն համար:

Լստ իս դրա ճարը շատ հեշտ է. Թող ալունեան փոխանակ 12 անդամներից բազկացած մի կոմիտեաի ընտրուի մի նորը 120 անդամներից և ամեն մի ներկալացում (եթէ թատրոնը դատարկ եղաւ—ինչ խօսք որ դատարկ է լինելու) 120 անդամների ազգականները ու բարեկամները ձրի մուտք ունենան թատրոն ու զահլիճն էլ լիքը կը լինի... ալո, զահլիճը, բայց ոչ կասսան:

* * *

Հալոց թատրոնական կոմիտէտի իրանք իրանց ընտրած անդամները անքան ժամանակ վարեցին հակ թատրոնի գործը, մինչև որ իրանց միջից մէկը ներկալացրեց իւր թարգմանած՝ Զուգերմանի «Պատիւը»:

Միմիալն այս պիեսի հետ ծանօթանալուց իւտու—կոմիտեան անդամները վիճարանութեան ենթարկեցին պատուի խնդիրը և իրարից խռով բաժանւեցին:

Թատրոնական «գործը» տաճելու պատիւը մնում է ալսօր երկուակի թէ երեքի ձեռքին, երեքի, որոնք ով գիտէ բնչ կերպ ըմբռնեցին Զուգերմանի «Պատիւը»:

* * *

— Ինչու չէք տարածում «Մուրճ»-ը ձեր շրջանում, հարցնում էր ինձ պատահելիս «Մուրճ»-ի հրատարակիչը.—Սխալում էք եթէ «Մուրճ»-ի վերաբերմամբ որ և է խրախուս էք սպասում մեր օրաթերթերից. նոքա զբաղւած են իրար հետ ունեցած ընթացիկ հաշիւներով, ջրմաղութեամբ, ինքնազովութեամբ, մեղաւոր և անմեղ մտածմունքներով և ալլն.

Պր. Հրատարակիլ ասածները գլուխս մտան. չը որ, ասում էի ինձ ու ինձ, բաժանորդների թիւը որ աւելանալ, համ մենք, աշխատակիցներս, աւելի լաւ կը վարձարւունք, համ էլ գուցէ «Մուրճ»-ը իւր բաժանորդների համար պղեմիաներ նշանակի.

Ինչ և է ակսեցի ամեն տեղ քարոզել.

—Պր. Վերնակտուրեան, (ասացի ես իմ ոչ բարեկամ բայց ծանօթ-ներիցս մէկին—որը մի հարուստ ռանտափէ է համարում և տարէնը 7—8 չաղար է մախում), տարին վերջանալու վրա է, ինչու չէք գրում «Մուրճ»-ին, ուր ես աշխատակցում եմ.

Աղբեր, ասաց նա ինձ, փող չը կայ փող, մէկէլ օրը շոսում տար-մցի 500 ռուբլի, երէկ գնացել էի սմամզել նիստուշին... և աւ ասացիր որ տարին վերջանում է. պէտք է Պետերուրդի անզիական կլուրին ուղար-կեմ անդամակարս—զիտես—ես անդամ եմ. պատահում է երկու-երեք տարին մին անդամ անստեղ եմ լինում ու առանց սրան նրան խնդրելու գնում եմ իրը անդամ, ալստեղ էլ խոմ կլուրի, կրուժուկի և արտիստիքա-կան ընկերութեան անդամ եմ... աղբեր, փող չի մնում, դարսակ է է...

—Ի հարկէ դարսակ կը լինի, ասացի ես անկելով աչքերս Վերնա-կտուրեանի զլիսին, մինչդեռ ծանօթս երեսի թէ իւր քսակի դատարկու-թեան մասին էր ուղում ակնարկել.

—Եկէք ակս երեկոյ «Նինիշին», ասաց նա ինձ հեռանալով.

—Պարուն կերուխումնան, ասացի ես Թիֆլիսի հաւ վաճառական-ներից մէկին, ինչի հաւ գաղէթ չէք ստանում, մտաւոր զարգացումը մնա բան է...

—Մեր ինչ խելքի բանն է գաղէթը ու մտաւոր զարգացումը, մնը՝ լաւ կախէթն է, լաւ դօշ, զուրգէւ օսի պանիր, թարխուն, լօքօ, խորո-ված, մի լաւ էլ զուղուկ, Գաղէթը մնզանում ինչ կօնի, Դուն էլ արի մնզ մօտ—քիչ ռանզդ տեղը գաէ—թէ չի նշի նման ես դառել.

—Պր. Լրագրապոչեան, ինչու չէք զրւում «Մուրճ»-ին.

—Որովհետեւ, որովհետեւ... ես սկզբունքով հակառակ եմ «Մուրճ»-ին. ամսագիրը պէտք է անպատճառ մի գաշնակից լրագիր ռանենակ—իսկ «Մուրճ»-ը համ ամենքին պախարակում է, համ, մին էլ տեսար, սրան ու նրան գովեց. խօմ ալդպէս չի կարելի... ես սկզբունքով դէմ եմ «Մուրճ»-ին.

—Պ. Խոտէլիկենան, ինչու չէք տարածում «Մուրճ»-ը ձեր շրջան-

ներում ու ինքներդ էլ ստանում.

—«Մուրճ»-ը մեղ ոչ մի անունդո չի տալիս. մեր լրագրերը մնզ սո-վորեցրել թունդ խօսքերի, փողոցալին սրախօսութիւնների, զըր-պարտութիւնների, սուստ լուրերի և առանց ակս բաների մենք առ ևս չենք կարող ապրել. իմ կարդացած լրագիրը կարող է ինչ ուղում է ասել ասի, միան թէ հակառակորդի տակին չը մնալ. լրագրերը կար-դացւում են, որովհետեւ թէ առաջնորդողներում, թէ թղթակցութիւնն-

րում, թէ լուրերում մի խօսքով ամեն մի տողում և տողամէջերում կան ակնարկութիւններ սրա ու նրա մասին—իսկ «Մուրճ»-ը—այս օրինակի համար, փոխանակ դպրոցական ռեֆորմ չողւածը գրելու, աւելի լաւ կը լինէր եթէ լրագրերից հովանաւորածներից մէկին պաշտպանէր—Բայց թէ չէ—ամեն բանից խնդիր էք շինում, իսկ անձնաւորութիւնները չէք շատափում, թէ որ ուզում էք «Մուրճ»-ը տարածվի—ամեն մի համարում տպեցէք Օրէցօր, այն էլ առաջնորդողի տեղ՝

—Պարոն Գրասէրեան, ախրը Բնչու «Մուրճ» չէք ստանում,

—Գիտէք ինչ կա, պէտք է խմբագիրը փոխել անկեղծ եմ ասում. մի անդամ մի պատմութիւն բերի 800 երեսանոց—մերժեց, միւս անդամ Սպիհնոզակի մասին մի թարգմանութիւն բերի 600 երեսանոց—մերժեց, երրորդ անդամ Ակադեմանի թատրոնի անցնալը բերի 500 երեսանոց—մերժեց, մին անդամ մի տրագեդիա բերի սպանութիւններով, թունաւորութիւններով—էլի մերժեց, «Մուրճ»-ը, ասում է, իրան նւիրել է կենսական ալրող հարցերին—ասացէք խնդրեմ՝ սպանութիւնը թոնը, թատրոնը, Սպիհնոզան ալրող հարցեր չեն... Ամենք թէ թարգմանութիւններ էին ու քիչ էլ երկար ու ձիգ... Աղջքան մերժումից հատու զուք ուզում էք որ ես «Մուրճ» ստանամ և «ձուից նոր զուրա եկածներիո հում հում չողւածները կարդամ ու փող էլ վճարեմ... Հիմա ես պատրաստ ունեմ մի պօչմա, եթէ «Մուրճ»-ը...

—Պարոն Բծախնդիրեան, կարծեմ «Մուրճ»-ը ձեզ պէտք է հստագրքըրի...

—Կ'ինչ էք հբամակում, «Մուրճ»-ի նման մի ըստազբօսիկ ուղղագրութեան ամսագիր մնաք զեռ չենք անեցնել. ամեն տեղ նորամուծութիւններ, վոերը զէն է զցում, վելերի տեղ հին զրում, ասում էլ են թէ երկտառ ու ե իւ ձանանչիւնների համար նոր տառեր էլ է ձուլում...

Դրեցէք ակնարէս ինչպէս ամենքն են զրում, ալսինքն համ «Մշակ» ը, համ «Նորդ-Դարո»-ը, համ «Արձագանք»-ը, համ «Աղբիւր-Տարաղ»-ը...

Ակսղիսով, ընթերցող, փոխանակ բաժանորդներ ճարելու, ես լսեցի ձրի խորհուրդներ Եթէ զուք ես ունիք ձրի խորհուրդ տալու, փոխանակ բաժանորդ գանելու՝ գրեցէք «Մուրճ»-ին իւ հասցէով.

* * *

Ով գիտէ, ընթերցող, վիճակած է ինձ արդեօք քեզ հետ միանդամ ես տեսնել ալս տարի Ուստի առաջարիում եմ քեզ ազատ ժամանակդ գործածել մի հանելուկ լուծելու, որի լաջող լուծումը թերես քեզ իրաւունք կը տակ տպագրել և տարածել Խրիմեանի բոլոր գրւածքները.

Այն Բնչ է—որի անունը կա, —ինքը չը կար...